

3. Քրիստոսի Խաչին գիւտը .

Նկատի առնելով Ս. Յարութեան Հայոց Ս. Լուսաւորիչ եւ Կեղեցիին նախնական անունը որ կ'ըսուի Ս. Խաչ, ինչպէս նաև նոյն եկեղեցիին ու Գիւտ Խաչի այրին տեղադրութիւնը ու թէ եկեղեցիին ու նոյն այրին սերտ յարակցութիւնը՝ մեր գրուածքին ամբողջութեան համար՝ պէտք կը տեսնենք հակիրճ տողերով ծանօթագրել խաչի գիւտին վկայութիւնները ու անոնց եզրակացութիւնը գիտական արդի քննութեանց համաձայն :

Գիւտ խաչի նկատմամբ ճոխ է աւանդութիւնը և եկեղեցական մատենագրութիւնը : Մենք այս տողերով պիտի ջանանք համառօտել գիւտ խաչի նկատմամբ գրուած հին հեղինակութիւններու ստուգութիւնը, քաղելով Dictionary of Christian Biography and Literature գիրքին մէջ M. F. A. ի յօդուածէն (էջ 439-441) :

(1) 333ին Պորտոյի Անանուն ուխտաւորը որ գիւտ խաչի թուականէն եօթը տարի յետոյ Երուսաղէմ կ'այցելէ : Յիշեալը կը նկարագրէ քաղաքը և կը յիշատակէ աւանդական Ս. Տեղերը : Նոյն նկարագրութեան մէջ կը գտնուին Կայրափայլի տունը և Զաղանաց սիւնը որուն կապեցին մեր Տէրը, Պիղատոսի պալատը, Գողգոթայի բլուրը, Ս. Յարութեան այրը, որուն վրայ Կոստանդիանոս շինեց գեղեցիկ եկեղեցի մը, ինչպէս երկու եկեղեցիներ՝ մին Զիթենեաց լերան, և միւսը՝ Համբարձման լերան վրայ : Սակայն խաչին ակնարկութիւն չկայ և ոչ իսկ կը յիշուի Հեղինէի անունը :

(2) Եւսեբիոս Վարժ Կոստանդիանոսի գիրքը գրած է հաւանաբար 338ին, Պորտոյի ուխտաւորէն հինգ տարի վերջ : Ան կը պատմէ Հեղինէի Երուսաղէմ այցելութիւնը, բայց անոր անունը չի կապեր Խաչելութեան և Ս. Գերեզմանի տեղերուն հետ : Ան կը յարէ թէ Կոստանդիանոս եկեղեցի մը շինեց Յարութեան տեղոյն վրայ, գեղեցկացնելով Ս. Ծննդեան և Ս. Համբարձման այրերը, և իր մօրը յիշատակին երկու եկեղեցիներ՝ մին Ինթղեհէմի մէջ, միւսը Զիթենեաց լերան վրայ. Եւսեբիոս՝ Հեղինէին և Ս. Յարութեան այրին հետ կապակցութիւն մը չի գնորդ, այլ միայն միւս երկուքին : Ան կը գրէ թէ կայսեր մօր ճամբորդութեան շար-